

4	Աղաքաբլու . . .	1				5		15	12	
5	Բարանի . . .					6		18	13	
6	Դուրկայ . . .					5		14	13	
7	Դուշագ . . .					5		16	12	
8	Մամադետր . . .	1	1			21	88	56	49	451
1	Սովուղբուլաղ քաղաք	1				1	1	3	2	5
Գիւղօրայք										
Ի շրջակայ՝ Ս՝Ն-ՂԵ՛-ԼԱՂ՝-										
1	Դարալակ . . .	1	1			14		38	33	
2	Ղըղըլ — Ղօփի . . .	1				7	21	19	17	107
1	Մարաղայ քաղաք . . .	1	1	1*	27	63	63	162	147	309
Գիւղօրայք										
Ի շրջակայ՝ Մարաղայ +ղ+ի.										
1	Փէհրալայ . . .	1	1			29		82	63	
2	Աղաճարի . . .	1				2		6	5	
3	Խօջամիր . . .					3		8	7	
4	Ղալաջուղ . . .	1				40		28	24	
5	Միանդալ . . .	1				20		56	50	
6	Սօհրուլ — Թափայ . . .					8		22	19	
7	Ղարալեւրան . . .	1	2			40	112	112	92	574
Ընդհանուր գումարն է		91	78	16	564		3614	11534	9596	21130

Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս՝ յանցելում ամի՝ Ատրպատականի Հայոց Թեմին վիճակագրութիւնը կազմելով՝ ներկայ տարւոյս սկիզբներում ներկայացոյց Վեհ. Հայրապետի, յորում ջանացած եւ յաջողած է ըստ բաւականին ճիշդ բովանդակել վիճակագրեալքը՝ զոր եւ վերեւ հրատարակեցինք:

Մի քանի տարիներ առաջ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Յօբեանցն եւս կազմած էր մի համառօտ այսպիսի վիճակագրութիւն:

Ի յաջորդ թերթս՝ վերեւ հրատարակեալ եւ հին ցուցակի առթիւ կրկին կտեսնուիմք:

Ա.Ռ.Ա.ԶՆՈՐԴԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՔ.

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս՝ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի ձեմարանի Վերատեսչութիւնը եւս իւր վերայ ունենալով՝ Վրաստանի եւ Իմէրէթի վիճակին Առաջնորդ կարգեցաւ, եւ Գեր. Մակար Ս. Արքեպիսկոպոսն տեղափոխեցաւ յԱռաջնորդութիւն վիճակին Պետարապոյ եւ նորոյն Նախիջեւանի:

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանց յառաջակայ Ապրիլ ամսոյ ըսկիզբներում պիտի երթայ ի Տփլիս իւր նոր պաշտօնը ստանձնելոյ համար, եւ Մայիսի վերջերում պիտի վերադառնայ ի Ս. Էջմիածին, եւ զկնի տարեկան հար-

ցարննութեանց աշակերտաց ձեմարանի՝
ամառնային եղանակում պիտի շրջագա-
յէ յայցելութիւն վիճակին Տիխեաց:

ՓՈԽԱՆՈՐԳԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՔ:

Գեր. Թագէսս Եպիսկոպոս Զիւնա-
կան՝ Շամախույ վիճակին Առաջնորդա-
կան Փոխանորդ կարգեցաւ, եւ Գեր.
Գրիգոր Ս. Արքեպիսկոպոս Սաղինեանց
փոխադրեցաւ ի Փոխանորդութիւն վի-
ճակին Ախալցխոյ:

ԽԱՉԱՏՈՒՐ ՊԱՀՃԱՍԱՐԱՅՑԵԱՆՑ.

Նոր Նախիջեանցի Մեծ. Պ. Խաչա-
տուր Պահճասարայցեանց՝ ի նպաստ
Գէորգեան ձեմարանի Մայր Աթոռոյս
Ս. Էջմիածնի Դ հալար հինգ հարիւր ռուբ-
լեաց ռուսական գանձատումն (պանքո-
վըյ պիլէթ) նուիրեց:

Ամազրոյս միջոցաւ հրապարակաւ
շնորհակալութիւն յայտնելով յիշեալ
բարեպաշտ անձին՝ կգովեմք նորա բա-
րի եռանդ եւ նպատակը:

ԿՈՆԴԱԿՔ ՈՒՂՂԵԱԼՔ

ՀԱՅՈՑ Ի ՄԱՆՁԻՍԹԷՐ.

Ինչպէս անցեալ տարւոյ Արարատ ամ-
սագրոյս վերջին թուոյն մէջ՝ Մանչէս-
թերէն ստացեալ մի գրութեան հրատա-
րակութեան առթիւ խոստացած էինք
ամենայն Հայոց Ա. Է. Հայրապետի առ
Մանչեսթերաբնակ մերազնեայս եւ առ
Հովիւ նոցին ի 1869 ամի սկզբուած Կոն-
գակաց օրինակները հրատարակել, ահա-

ւասիկ ներկոյ թուոյս մէջ կկատարեմք
մեր խոստումը նախ յանուն Խորէն Ա. ար-
դապետի (որ յայնժամ Մանչեսթերի
Հայոց Հովիւ էր) եւ ապա յանուն տեղա-
կան Հայոց գրուած կոնգակները տպելով:

«Թորէ անտի ամբառնալոյ մերոյ յԱթոռ Հայ-
րապետութեան Ա. Հօրն մերոյ Գրիգորի Հայաստա-
նեայցս բազմբախտ Լուսաւորչի մին ի զխառ-
րագոյն նպատակաց մերոց եղեալ է ըստ պար-
տուց սրբազան պաշտամանս՝ հոգևոր պիտոյից
տանել խնամ հեռաբնակ եւ տարաբնակ որդւոց
մերազնեայց, եւ միշտ անորժ հաճութեամբ ըն-
թերցեալ եմք զլուրս՝ որք աւետեն մեզ զհոգևոր
գործունէութիւն նուիրելոցն ի մանկական տիոց
ի սարս ծառայութեան տիրահաստատ Եկեղեց-
ւոյ Հայոց, եւ չկամիմք լինել ընաւ անփոյթ առ
ի տալոյ նոցա զկարևոր հրահանգս հաստատուն
մնալոյ յայնժմ: Աստուածահաճոյ տալարիզի ի
պէտս հոգևոր կրթութեան կարօտեալ համազ-
գեաց:

«Ամին իրի քաղցր էր մեզ եւ հաճոյական ըն-
թեռնուլ ի լրագիրս զփայլեալանդն ջանս բարե-
պաշտութեան ձերոյ, որով ըստ կարգի եւ արտ-
րողութեանց անսրտ եկեղեցւոյս Հայաստանեայց՝
համաձայն սիրայօժար հրաւիրանացն կրօնասէր
որդւոցն մերոց ըստ սիրոյ վաճառաշահութեան
իւրեանց մինչեւ ի Մանչեսթեր ուղևորելոց, օրհ-
նեալ էք զհիմուն նորոգ կառուցանելի Եկեղե-
ցւոյն Հայոց, որում պէտա ունէին արդարեւ հա-
մազգայինք մեր ի հեռաբնակ տեղւոյն յայնմիկ՝
առ ի կատարել ըստ պահանջելոյ հարկին զհո-
գևոր պիտոյս անձանց եւ ընտանեացն:

«Աւստի այսու Հայրապետական Անդակաւ օրհ-
նելով զձեզ՝ ոչ յաւելորդս համարիմք յիշել
յունկն ձեր զկարևոր պարագայս՝ որք հային ի
հաստատութիւն կրօնի եւ դաւանութեան հեռա-
բնակ որդւոցն մերոց. ժիր եւ արթուն հովու-
թեամբ ի գէպս կարևորս ըլլով զհոգևոր պիտոյս
փորոս հօտիդ՝ ոչ միայն զնոցայն սէր յանկուսցեալ
ի ձեր կողմն, այլ եւ զպատճառս անխորժ եւ
օտարամոյժ զիսմանց յաճախելոց ի դարս դարս
յօտարաբնակ որդւոց մերոց մերժեալ հեռա-